«Հանդեսի» սույն համարը նվիրվում է
ակադեմիկոս ***Մկրտիչ Ներսիսյանի*** հիշատակին

(1909–1999)

Данный выпуск ИФЖ посвящается памяти
академика ***Мкртича Нерсисяна***

ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

1999 թվականի հունվարի 28-ին վախճանվեց արդի հայ պատմագիտության նահապետ, ակադեմիկոս Մկրտիչ Գեղամի Ներսիսյանը: Մեր գիտությունն ու ժողովուրդը անդառնալի կորուստ ունեցան. մենք զրկվեցինք մի Սարդուց, որը, չնայած առաջացած տարիքին, բառացիորեն մինչև իր կյանքի վերջին րոպեները բոլորանվեր ծառայում էր գիտությանը:

Իր իմաստալից ու արդյունավոր ողջ կյանքի ընթացքում Մկրտիչ Գեղամովիչը զբաղվում էր հայ ժողովրդի պատմությանը վերաբերող հանգուցային հարցերով. Մեծ Եղեռնի փաստում և վերլուծություն, ազատագրական-ինքնապաշտպանական պայքարի պատմություն, հայ-ռուսական դարավոր հարաբերություններ՝ այդ հարաբերությունները համարելով բախտորոշ և միակ ճիշտ ճանապարհը նաև ապագայի համար, մանավանդ որ ճակատագրի բերումով մեր ժողովուրդը հայտնվել էր քաղաքական ու աշխարհագրական միանգամայն անբարենպաստ պայմաններում:

Ակադեմիայի փոխպրեզիդենտ Մ. Գ. Ներսիսյանի նախաձեռնությամբ 1958 թ. հիմնադրվեց «Պատմա-բանասիրական հանդեսը», որի 41 տարվա անընդմեջ խմբագիրն էր ինքը՝ Մ. Գ. Ներսիսյանը: Նրա ամենաեռանդուն ջանքերով ու դավանած սկզբունքների կիրառումով «Պատմա-բանասիրական հանդեսը» դարձավ միջազգային ճանաչումով ամենահեղինակավոր հայագիտական պարբերականը, որի մասին շատ բարձր գնահատականներ են տվել Հայաստանի, Ռուսաստանի և արտերկրի մեծագույն հեղինակությունները:

Մ. Գ. Ներսիսյանին ոչ նվազ չափով զբաղեցնում էին հայ ժողովրդի մերօրյա սոցիալ-տնտեսական հարցերը, բնապահպանության, հատկապես Սևանի խնդիրը: Դեռևս փոխպրեզիդենտի պաշտոնում նա ամենաջերմեռանդ ձևով պաշտպանում էր գյուղատնտեսական գիտության բաժին ստեղծելու գաղափարը: Մ. Ներսիսյանը լրջորեն մտահոգված էր վերջին տարիներին հայոց լեզվի վերաբերմամբ կատարվող անխոհեմ փորձարարություններով: Եվ «Պատմա-բանասիրական հանդեսը», խմբագրի նախաձեռնությամբ, մեկ անգամ չէ որ անդրադարձել է հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, պատմության և բանասիրության, ուղղախոսության ու ուղղագրության, Սևանի փրկության և շատ ու շատ այլ խրթին հարցերի

հիմնավոր լուսաբանման խնդիրներին, որոնք մշտապես գտնվում էին մեծ գիտնականի ու հայրենասերի ուշադրության կենտրոնում:

Մ. Գ. Ներսիսյանը թողել է չափազանց հարուստ գիտական ժառանգություն, նաև արխիվ ու գրադարան: Նրա գրասեղանին կան տպագրության համար արդեն պատրաստ աշխատություններ, որոնց հրապարակումը մեր քաղաքացիական և մասնագիտական սուրբ պարտքը պետք է լինի: Արխիվում կան նաև ուսանելի զանազան գրառումներ, ապագա գրվելիք թեմաների հիշատակություններ, խորհուրդներ գիտնականներին և այլն:

Մ. Ներսիսյանն այն հազվագյուտ անձնավորություններից էր, որին հոգեկան մեծագույն բավարարություն էր տալիս ուրիշներին օգնելը թե՛ գիտության և թե՛ այլևայլ բնագավառներում:

Մեզանից հեռացավ մեր ժամանակի մեծավաստակ հայագետը՝ բազմաթիվ կոթողային աշխատությունների հեղինակ, սկզբունքային, ազնիվ, բյուրեղյա հոգու տեր և չափազանց բարի մի Մարդ, մեր սիրելի ակադեմիկոս Մկրտիչ Գեղամի Ներսիսյանը: